


01.02.2018 12:56



Հարգելի փաստաբաններ,

Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի, ՀՀ փաստաբանների պալատի պատվավոր անդամ, բարերար Ռայմոն Եզեգեյանի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի միջև շարունակական համագործակցության շրջանակներում՝ **Ռայմոն Եզեգեյանը պատրաստակամություն է հայտնել այս տարի նույնպես կանխավճարի կարգով վճարել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից սահմանած կարգով որոշված ևս 50 (հիսուն) փաստաբանի մեկ տարվա անդամավճարները:**

Նշված նախաձեռնության կապակցությամբ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **01.02.2018թ. թիվ 30-Լ որոշմամբ** հաստատվել է «**50 փաստաբանի «Փաստաբան Եզեգեյան օժանդակություն» տրամադրելու մասին» կարգը**, համաձայն որի՝ շահառուներին որոշելու նպատակով ձևավորված հանձնաժողովը՝ ըստ կարգով նշված առաջնահերթության, նախապատվություն է տալու հետևյալ փաստաբաններին՝

1) 60-69 տարեկան փաստաբաններին՝ ովքեր չունեն մշտական աշխատանք, **ոչ ավել, քան 10 (տաս) փաստաբան:** Այս խմբում նախապատվությունը տրվում է տարիքով ավագ փաստաբաններին.

2) 2-րդ կամ 3-րդ կարգի հաշմանդամ փաստաբաններին՝ **ոչ ավել, քան 5 (հինգ) փաստաբան:** Այս խմբում նախապատվությունը տրվում է առավել վաղ հաշմանդամության կարգ ստացած փաստաբաններին.

3) միայնակ մայր հանդիսացող փաստաբաններին՝ **ոչ ավել, քան 7 (յոթ) փաստաբան:** Սույն կարգի իմաստով միայնակ մայր է համարվում ամուսնության մեջ չգտնվող այն կինը, ում խնամքի տակ գտնվում է առնվազն մեկ անչափահաս երեխա, որի ծննդյան վկայականում **(ա)** բացակայում է երեխայի հոր մասին գրանցումը, կամ, **(բ)** երեխայի հոր մասին գրանցումը կատարվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մոր ցուցումով, կամ, **(գ)** երեխայի հայրը մահացել է, կամ **(դ)** ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով երեխայի հայրը ծանաչվել է անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած: Այս խմբում նախապատվությունը տրվում է առավել շատ երեխա ունեցող, իսկ երեխաների հավասար քանակի դեպքում՝ տարիքով կրտսեր երեխա ունեցող փաստաբաններին.


4) ընտանիքում պարտադիր զինվորական ծառայության զորակոչված (զինվորական ծառայության մեջ գտնվող) զավակ ունեցող փաստաբաններին՝ **ոչ ավել, քան 10 (տասը) փաստաբան:** Այս խմբում նախապատվությունը տրվում է **(ա)** ընտանիքում մեկից ավելի զորակոչիկ ունեցող փաստաբաններին կամ **(բ)** զինվորական ծառայության առավել ուշ զորակոչված զորակոչիկ ունեցող փաստաբաններին.

5) նյութական դժվարություններ ունեցող մարզի փաստաբաններին՝ **ոչ ավել, քան 10 (տաս) փաստաբան,** յուրաքանչյուր մարզից մեկ փաստաբան՝ մարզային համակարգողի գրավոր առաջարկով.

6) երկու կամ ավելի անչափահաս երեխաներ ունեցող փաստաբաններին՝ **ոչ ավել, քան 8 (ութ) փաստաբան:** Այս խմբում նախապատվությունը տրվում է առավել շատ երեխա ունեցող, իսկ երեխաների հավասար քանակի դեպքում՝ տարիքով կրտսեր երեխա ունեցող փաստաբաններին:

Օժանդակությունից օգտվելու համար շահառուները կարող են դիմել հանձնաժողովին մինչև 2018 թվականի մարտի 1-ը (ներառյալ): Կարգին համապատասխան որոշված ընդհանուրը 50 շահառուներին կտրվեն համապատասխան հավաստագրեր:

Առաջարկվող նորություններ



27.04.2015 ՌԱՅՄՈՆ
ԵԶԵԳԵԼՅԱՆԻ ԵՎ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵԼ Է
ՀՈՒՇԱԳԻՐ



29.04.2015 ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԾԱՎԱԼՈՂ 80
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ
ՇՆՈՐՀՎԵԼՈՒ Է ՄԵԿ
ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎԾԱՐԻ
ԿԱՆԽԱՎԾԱՐԻ
ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ



10.07.2015 ՄԱՐԶԵՐԻ 80
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՍՏԱՑԵԼ ԵՆ
ՌԱՅՄՈՆ ԵԶԵԳԵԼՅԱՆԻ
ԹՈՇԱԿԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԸ



14.12.2015 ԵՐԵՎԱՆ
ՔԱՂԱՔՈՒՄ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ 80
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ
ՇՆՈՐՀՎԵԼՈՒ ԵՆ ՄԵԿ
ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎԾԱՐԻ
ԿԱՆԽԱՎԾԱՐԻ
ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })